

**ՆԱՐԵԿ**  
**ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ**  
**Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ**

**ԲԱՆ ԺԷ.**

Ա.— Կ'աղաչեմ Քեզի, որ խնամակալն ես վտանգաւոր եւ տաժանալի կիրքերու թախճութեամբը վշտացած հոգիներուն. մի՛ աւելցնէր հեծութեանս ցաւը. մի՛ խոցեր զիս որ վիրաւորւած եմ. մի՛ դատապարտեր պատժուածս. մի՛ տանջեր չարչարուածս. մի՛ գանակոծէր հարուածուածս. մի՛ զլորեր ինկածս. մի՛ կործանէր գայթակղածս. մի՛ մերժէր հեռացածս. մի՛ տարագրէր հալածուածս. մի՛ անչցնէր պատկառածս. մի՛ կշտամբէր խրտչածս. մի՛ խորտակէր բեկտուածս. մի՛ խռովեցնէր վրդովուածս. մի՛ այլեկոծէր բութի բռնուածս. մի՛ շշմեցնէր մրրկուածս. մի՛ կեղեքէր գիշատուածս. մի՛ ջախջախէր բերկուածս. մի՛ խաճատեր մորմոքուածս. մի՛ կուրցնէր խաւարածս. մի՛ զարհուրեցնէր ապշածս. մի՛ խորովէր խարշատածս. մի՛ մահացնէր զիս որ հիւանդ եմ. մի՛ ծանր բեռներու մատներ տկարս. անուր մի՛ աւելցնէր կարկամած թիկունքներուս. կրկին անգամ ողբ մի՛ խառներ հեծութեանս մէջ. մի՛ խիստ վարուիր ինձի պէս հողին հետ. մի՛ սաստիկ ինձի պէս մոխիրին հետ. մի՛ անաչառօրէն՝ ինձի պէս ստեղծուածին հետ. մի՛ ահարկութեամբ՝ ինձի պէս փռշիւն հետ. Դուն մե՛ծդ խստութեամբ մի՛ զարնուիր փոքիս. Դուն լոյսդ՝ ստորնականիս. Դուն բնութեամբ բարիդ՝ ի բնէ չարիս. Դուն օրհնութեան ողկոյզդ՝ անէծքի պտուղիս. Դուն ճշմարիտ քաղցրութիւնդ՝ ամբողջ դառնութեանս. Դուն մշտապէս փառաւորուածդ՝ բոլորովին անարգիս. Դուն կեանքի նշխարդ՝ կաւէ զանգուածիս. Դուն տէրերու տէրդ՝ երկրային տիղմիս. Դուն աննուազ լիութիւնդ՝ չքաւոր ստրուկիս. Դուն անկապուտ ճոխութիւնդ՝ անպատասպար տարապածիս. Դուն անկարօտ բարութիւնդ՝ ամենաթշուառ աղքատիս հետ: Վասնզի ո՞վ առաւօտին հասնելով, լոյսին ծագած պահուն կը վախնայ թէ պիտի մուրջ ըլլայ. ո՞վ կենաքին մօտիկը եղած վարկեանին մահէն կ'երկնչի. ո՞վ ազատութիւնը ողջունած բոպէին կը խորհի թէ պիտի յանցաւոր ըլլայ. ո՞վ շնորհաց հրատարակուած ժամուն դատապարտուելու կասկածը կ'ունենայ. ո՞վ փրկութեան հասած ատեն՝ մատնուելու, նորոգումի միջոցին՝ խանգարուելու, օրհնութեան ժամուն՝ տարագրուելու, բժշկութեան վարկեանին՝ վիրաւորուելու, լիութեան միջոցին՝ նուազելու, հացի յաճախութեան ատեն՝ անօթենալու, գետերու հոսանքին առջեւ՝ ծարաւելու, մայրենի գութին գիրկը՝ նենգուելու, եւ աստուածային խնամատար աջիդ ներքեւ չարչարուելու զգացումը կրնայ ունենալ:

Բ.— Արդ, մարմնական բորոտութեամբ սաստիկ ախտացածին(1) հետ, ե՛ս ալ, հոգիէս վտանգուած, կը պաղատիմ Քեզի. «Տէ՛ր, եթէ կամիս կարող ես զիս սրբել»: Մշտագիշեր խարխափանքով նեղուած աչազուրկներուն(2) հետ մեծակական ձայնով կը հառաչեմ. Դաւիթի Որդի չեմ անուաներ Քեզ, այլ կը դաւանիմ թէ Դուն ծնունդն ես Աստուծոյ էութեան: Ո՛չ միայն Բաբբի կը կոչեմ, որ ճշմարտութիւնը իբր թէ գիտցող վարդապետներուն

պատուանունն է, այլ երկինքի եւ երկրի տէր կը հաւատամ զՔեզ: Ո՛չ թէ երկարած ձեռքիդ միայն հպումովը, ո՛վ բարեգութ եւ մերձաւոր Աստուած, այլ կը յուսամ թէ, շատ հեռուն, միայն խօսքովդ պիտի կրնամ բժշկուիլ: Ո՛չ թէ կամելուդ ու ողորմելուդ միջեւ թեական պայմանի մը սահմանը կը դնեմ, որ երկմտութեա՛ն է նշան, այլ կը հաւատամ թէ կը կամիս՝ իբրեւ բարեգութ, եւ կրնաս՝ իբրեւ արարիչ: Ըսէ՛ ուրեմն խօսքով, ու պիտի բժշկուիմ: Հարիւրապետին(3) հաւատքին է՛ս ալ կը մասնակցիմ: Կը հաւատամ թէ յարուցանելու կամ բժշկելու համար ունեցած կարողութիւնդ կ՛ազդէ ո՛չ թէ տունէ տուն կարճ հեռաւորութեան մը վրայ միայն, այլ նաեւ թէ՛ վերին երկինքի մէջ բազմելով, անկէց բովանդակ ստորին երկրի վրայ Դուն կրնաս կատարել ա՛յնպիսի սքանչելի հրաշքներ, զոր չեմ կրնար խօսքով բացատրել:

Գ.— Շնորհէ՛ ինձի, ո՛վ բարութեանց Աստուածը եւ երանութեանց Տէրը, հինգ հարիւր դէնարին պարտքը, ինչպէս պոռնիկին(4) տան մէջ եղած ընդունելութեան միջոցին վճռեցիր Քու խօսքիդ դատակնիքովը: Դուն որ ո՛րչափ յաճախ պարգեւես՝ այնքան աւելի կը փառաւորուիս, եւ ո՛րքան շատ տաս՝ նոյնքան ալ կը սիրուիս, եւ ո՛րչափ աւելի ողորմիս՝ այնչափ աւելի կը հարստանաս եւ այսքան բարիքներու համար իրաւամբ կը գովուիս, Դուն որ ամէն բանի տէրը ըլլալով հանդերձ, մեզի հետ հաւասարորդ կը ճանչցուիս.ու թէեւ ամբողջը ունիս՝ մեր քիչովն ալ կը գոհանաս. եւ անճառելի պարգեւներուդ փոխարէն՝ մերինը իբր վճարում կընդունիս. ու մեր տուած երկրաւորին դէմ Քու անվախճանդ տալ պատշաճ կը համարիս. ու մերինը մեծ բանի տեղ դնելով, մեծապէս գոհ կը մնաս. ու երբ մեր քիչ տալէն Քեզի դոյզն փառք կէլլէ, չես դժուարիր: Նոյն գթութիւնը ցոյց տուր ինձի՛ եւս, որ անհամար պարտքերու տակ ճնշուած եմ. որպէսզի Քու պարգեւներուդ երախտիքները պատմող այս գրուածքին մէջ անոնց չափով նաեւ Քու զիս սիրելը տեսնուի: Փա՛ռք Քեզի ամէն պարագայի մէջ. ամէն: